ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-32/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

12-ը դեկտեմբերի 2018թ.
Ժամը 12^{00}

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ թիկունքային ապահովման վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Հ. Մելիքյանը,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի թիկունքային ապահովման վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Գ. Ուստյանը,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՎԱ մաքսազերծման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Հ. Բաբաջանյանը,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՎԱ մաքսազերծման բաժնի պետի տեղակալ, ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Ե. Վարդանյանը:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի առաջատար ծառայող Մ. Հոխեյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-32/2» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Մ. Հոխեյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2.«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-32/2» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4.Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-32/2» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Մ. Հոխեյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար ***«Գնահատման հետ կապված խորհրդատվական»*** ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-32/2» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակիցների անվանում
1	«Արատտա Ռիելթի» ՍՊԸ
2	«Ֆինապ» ՍՊԸ
3	«Ափթայմ» ՍՊԸ
4	«Ալտա Վիպ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2 .«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-32/2» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Մ. Հոխեյան)

Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում 18.12.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստում հանձնաժողովն արձանագրեց.

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են և համապատասխանում են «ՀՀՊՆՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/8» ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ հետևյալ դեպքի.

«Ափթայմ» ՍՊԸ կողմից ներկայացված Հավելված N 1-ում հարկ վճարողի հաշվառման համարը /ՀՎՀՀ 0501802/ թերի է ներկայացված: Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ մեկ աշխատանքային օրով կասեցրել էր հայտերի գնահատման նիստը և հանձնաժողովի քարտուղարը նույն օրը /18.12.2018թ./ արձանագրված անհամապատասխանության մասին www.armeps.am կայքի ոչ ավտոմատ ծանուցումով տեղեկացրեց «Ափթայմ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում /16.12.2018թ./ շտկել անհամապատասխանությունը: «Ափթայմ» ՍՊԸ-ին սահմանված ժամկետում շտկեց անհամապատասխանությունը և վերջինիս կողմից ներկայացված հայտը գնահատվեց բավարար:

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Չափաբաժնի համարը և չափաբաժնի անվանումը	*Նախահաշվային գինը ՀՀ դրամ*	*«Արատտա Ռիելթի» ՍՊԸ առաջարկած գինը*	*«Ֆինափ» ՍՊԸ առաջարկած գինը*	*«Ափթայմ» ՍՊԸ առաջարկած գինը*	*«Ալտա Վիպ» ՍՊԸ գինը առանց ԱԱՀ և ԱԱՀ-ով*	*1-ին/Հաղթող/ տեղ զբաղեցնող մասնակիցներ*
1. Գնահատման հետ կապված խորհրդավական ծառայություններ	———	15 600 000	48 400 000	51 600 000	52 800 000/ 63 360 000	«Արատտա Ռիելթի» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Մ. Հոխեյան)

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/: Համաձայն ներկայացված գնային առաջարկների՝ մասնակիցներից «Ալտա Վիպ» ՍՊԸ-ն աշխատում է ԱԱՀ-ով, իսկ «Արատտա Ռիելթի» ՍՊԸ-ն, «Ֆինափ» ՍՊԸ և «Ափթայմ» ՍՊԸ-ն առանց ԱԱՀ:

3.3 Քանի որ *«Գնահատման հետ կապված խորհրդատվական»* ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-32/2» ծածկագրով ընթացակարգը կազմակերպվել է ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ուստի գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի պահանջները, որոշեց գների նվազեցման նպատակով 27.12.2018թ. ժամը 11:00-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպել բանակցություն և նիստը կասեցնել մինչև բանակցության օրը: Բանակցությանը ներկայացան «Արատտա Ռիելթի» ՍՊԸ տնօրենը, «Ֆինափ» ՍՊԸ տնօրենը և «Ալտա Վիպ» ՍՊԸ կողմից լիազորված անձը: «Արատտա Ռիելթի» ՍՊԸ տնօրենը և «Ալտա Վիպ» ՍՊԸ կողմից լիազորված անձը չնվազեցրին իրենց կողմից առաջարկված գները, իսկ «Ֆինափ» ՍՊԸ տնօրենը համաձայնեց իր կողմից առաջարկված գին նվազեցնել/48 960 000 ՀՀ դրամը/ առաջարկելով վերոհիշյալ ծառայությունները մատուցել 48 400 000 ՀՀ դրամով: Այսպիսով «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-32/2» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ «Գնահատման հետ կապված խորհրդատվական» ծառայությունների մասով 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեց «Արատտա Ռիելթի» ՍՊԸ-ն /15 600 000 ՀՀ դրամ/, իսկ 2-րդ տեղ զբաղեցնող ճանաչվեց «Ֆինափ» ՍՊԸ-ն /48 400 000 ՀՀ դրամ/:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-32/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Մ. Հոխեյան)

4.1 **27.12.2018թ.** (էլեկտրոնային գնահատման արդյունքում) «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-32/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-32/2» ծածկագրով ընթացակարգում 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեց ««Արատտա Ռիելթի» ՍՊԸ-ն: Բավարար գնահատված մնացած մասնակիցները ճանաչվեցին հաջորդող տեղեր զբաղեցրած մասնակիցներ՝ ըստ ներկայացված գների շահավետության:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-32/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի **հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը**:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի ***«Ֆինանսական միջոցներ»*** որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Մ. Հոխեյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Մ. Հոխեյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-32/2» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը 12:00-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)		Հ. Մելիքյան
Գնահատող		Գ. Ուստյան
Գնահատող		Հ. Բաբաջանյան
Գնահատող		Ե. Վարդանյան
Գնումները համակարգող՝		Մ. Հոխեյան